



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՑԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 17.3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 2014 թվականի հունվարի 14-ի թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ) 2.2-րդ, 2.4-րդ, 2.5-րդ և 6.2-րդ կետերով.

- հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կարգի 6.2-րդ կետի ուժով 2014թ. մարտի 1-ի դրությամբ հանրային պաշտպանի թափուր հաստիքների թիվը կկազմի առնվազն 20-ը, ընդ որում, հնարավոր թափուր հաստիքներ կարող են առաջանալ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում և Երևան քաղաքում և ըստ այդմ, որպես առաջին մրցույթի առանձնահատկություն մրցույթ անցկացնելու սույն հրամանի մեջ չի մատնանշվում թափուր հաստիքների քանակն ըստ կոնկրետ մասնագիտացման և աշխատավայրի.

- ինչպես նաև այն, որ անցկացվելիք մրցույթն առաջինն է, և անհրաժեշտ է համարել հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակը, և որ հետագայում հանրային պաշտպանի թափուր հաստիք առաջանալու դեպքում նշանակումը կատարվելու է հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակից.

- միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ անհրաժեշտության դեպքում հանրային պաշտպանի գրասենյակում չընդգրկված փաստաբանների հետ ժամավճարային դրույքաչափեր նախատեսող աշխատանքային պայմանագրեր կնքելիս որպես կանոն նախապատվությունը տրվելու է հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում ընդգրկված փաստաբաններին.

որոշեցի՝

17 հունվար 2014թ.

թիվ 18-Լ

ք. Երևան

1. Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով անցկացնել երկու մրցույթ, այն է՝

1) քաղաքացիական և վարչական ուղղվածության հանրային պաշտպաններ նշանակելու համար մրցույթ, որի գրավոր փուլը տեղի կունենա 2014 թվականի փետրվարի 7-ին, իսկ հարցազրույցը՝ 2014 թվականի փետրվարի 21-ին.

2) քրեական ուղղվածության հանրային պաշտպաններ նշանակելու համար մրցույթ, որի գրավոր փուլը տեղի կունենա 2014 թվականի փետրվարի 8-ին, իսկ հարցազրույցը՝ 2014 թվականի փետրվարի 22-ին:

2. Մրցույթների անցկացման վայր սահմանել ք. Երևան 0037, Ուլնեցի 31, շինություն 3, 6-րդ հարկ (Փաստաբանական դպրոց):

3. Մրցույթների գրավոր փուլերի տևողության ժամկետ սահմանել 4 ժամը:

4. Մրցույթներին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են սույն որոշման ընդունման պահից մինչև 2014 թվականի հունվարի 31-ը ներառյալ: Դիմումները կարող են ներկայացվել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (հասցեն՝ ք. Երևան, Զաքիյան 3) յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 10:00-ից մինչև 17:00-ն:

5. Հաստատել մրցույթին մասնակցելու համար դիմումի ձևը՝ համաձայն հավելված 1-ի:

6. Հաստատել մրցույթի քննական թերթիկի ձևը՝ համաձայն հավելված 2-ի:

7. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝

1) մրցույթի անցկացման վերաբերյալ Պալատի անդամներին տեղեկացնել եռօրյա ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով, ինչպես նաև Պալատի ինտերնետային կայքէջում և Պալատի վարչական շենքում (հասցեն՝ ք. Երևան, Զաքիյան փող. 3) գտնվող համապատասխան ցուցատախտակի վրա հայտարարությունը գետեղելու միջոցով.

2) օժանդակել մրցութային հանձնաժողովին մրցույթի կազմակերպման և անցկացման աշխատանքների կատարման համար, այդ թվում՝ ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

17 հունվար 2014թ.

թիվ 18-Լ

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահի
17.01.2014թ. թիվ 18 -Լ որոշման

**ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹԻՆ
ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ
ՁԵՎ**

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահին

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի անդամ,
փաստաբան _____-ից

(անուն, ազգանուն)

արտոնագրի N _____

Մասնագիտական ուղղվածությունը _____
(նշել քրեական կամ քաղաքացիական և վարչական)

Աշխատավայրը _____
(նշել ՀՀ համապատասխան մարզը և/կամ քաղաքը)

Դ Ի Մ ՈՒ Մ

Ցանկանում եմ մասնակցել _____
(նշել քրեական կամ քաղաքացիական և վարչական)

ուղղվածության _____ մարզում (քաղաքում) հանրային
պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով կազմակերպվող մրցույթին:

Հայտնում եմ, որ տիրապետում եմ համակարգչային հմտություններին:

Միաժամանակ, հայտնում եմ, որ համաձայն եմ Հայաստանի
Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 2014 թվականի հունվարի
14-ի թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի
անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգ»-ով նախատեսված դրույթների
հետ:

Կից ներկայացվում է՝

գունավոր լուսանկարը 3x4 չափսի:

Դիմող՝ _____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

